# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. նոյեմբերին

**/վերլուծություն/**

2013թ. նոյեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 16507 գործարքներ, որոնց քանակը 2013թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 9.5%-ով, իսկ 2012թ. նոյեմբերի համեմատ աճել ՝ 5.0%-ով:

2013թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2013թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2013թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4414 օտարման գործարքների 74.2%-ը կազմել են առուվաճառքները, 25.4%-ը՝ նվիրատվությունները և 0.4%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.4%-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.7%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2013թ. նոյեմբերին, 2013թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 2.0%-ով, իսկ 2012թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 2.5%-ով:

2013թ. նոյեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.1%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. նոյեմբերին, 2013թ. հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 18.7%-ով, իսկ 2012թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 19.7%-ով:

2013թ. նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

| **Վարչական շրջաններ** | **Միջին գները /դրամ/** | | |
|---|---|---|---|
| | **նոյեմբեր 2012թ** | **նոյեմբեր 2013թ.** | **հոկտեմբեր 2013թ.** |
| **Կենտրոն** | 420300 | 428000 | 428000 |
| **Արաբկիր** | 348000 | 356600 | 356600 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 277000 | 282600 | 282600 |
| **Նոր-Նորք** | 241050 | 252000 | 251800 |
| **Ավան** | 249000 | 260000 | 260000 |
| **Էրեբունի** | 242000 | 250000 | 249500 |
| **Շենգավիթ** | 247000 | 255800 | 255100 |
| **Դավթաշեն** | 267500 | 275000 | 275000 |
| **Աջափնյակ** | 237500 | 249000 | 248500 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 233100 | 242000 | 241800 |
| **Նուբարաշեն** | 143500 | 154000 | 153000 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. նոյեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ հոկտեմբերի համեմատ, աճել են 0.1%-ով:

2013թ. նոյեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 426 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. հոկտեմբերի համեմատ աճել է 5.4%-ով, իսկ 2012թ. նոյեմբերի համեմատ նվազել՝ 2.5%-ով:

2013թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

| **Մարզեր** | **Քաղաքներ** | **Միջին գները /դրամ/** | | |
|---|---|---|---|---|
| | | **նոյեմբեր 2012թ** | **նոյեմբեր 2013թ.** | **հոկտեմբեր 2013թ.** |
| Արագածոտն | **Աշտարակ** | 113600 | 115000 | 114900 |
| | **Ապարան** | 52000 | 57200 | 57000 |
| | **Թալին** | 61200 | 64900 | 64850 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արարատ | Արտաշատ | 94100 | 95000 | 94800 |
| | Մասիս | 112000 | 115000 | 115000 |
| | Վեդի | 98100 | 100000 | 99800 |
| | Արարատ | 74200 | 75300 | 75100 |
| Արմավիր | Վաղարշապատ | 153200 | 154150 | 154150 |
| | Արմավիր | 119100 | 121200 | 121200 |
| | Մեծամոր | 86500 | 87500 | 87500 |
| Գեղարքունիք | Սևան | 99000 | 99150 | 99150 |
| | Գավառ | 56100 | 59800 | 59800 |
| | Մարտունի | 107300 | 107600 | 107600 |
| | Վարդենիս | 40500 | 44800 | 44550 |
| | Ճամբարակ | 25000 | 28700 | 28700 |
| Լոռի | Վանաձոր | 87200 | 88400 | 88400 |
| | Ստեփանավան | 74500 | 74500 | 74500 |
| | Սպիտակ | 99800 | 99800 | 99800 |
| | Ալավերդի | 53100 | 55000 | 55000 |
| | Տաշիր | 43800 | 47300 | 47150 |
| | Թումանյան | 11000 | 11000 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 | 8000 |
| | Ախթալա | 19800 | 20200 | 20200 |
| Կոտայք | Աբովյան | 153100 | 155100 | 155100 |
| | Նոր Հաճն | 128500 | 128600 | 128600 |
| | Բյուրեղավան | 107100 | 108150 | 108150 |
| | Եղվարդ | 109300 | 109300 | 109300 |
| | Հրազդան | 61000 | 63800 | 63800 |
| | Ծաղկաձոր | 292500 | 292500 | 292500 |
| | Չարենցավան | 84000 | 85500 | 85500 |
| Շիրակ | Գյումրի | 109100 | 109300 | 109300 |
| | Արթիկ | 65000 | 66500 | 66500 |
| | Մարալիկ | 38400 | 40700 | 40500 |
| Սյունիք | Գորիս | 116000 | 121800 | 121600 |
| | Կապան | 90200 | 92250 | 92100 |
| | Սիսիան | 87200 | 91150 | 91150 |
| | Մեղրի | 73500 | 80800 | 80600 |
| | Ագարակ | 44000 | 46850 | 46850 |
| | Քաջարան | 94300 | 94650 | 94650 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| Վայոց Ձոր | Վայք | 89800 | 95000 | 95000 |
| | Եղեգնաձոր | 118200 | 124850 | 124700 |
| | Ջերմուկ | 107600 | 112500 | 112500 |
| Տավուշ | Դիլիջան | 108100 | 113150 | 113150 |
| | Իջևան | 116000 | 118300 | 118300 |
| | Բերդ | 55600 | 60200 | 60200 |
| | Նոյեմբերյան | 44500 | 49900 | 49800 |
| | Այրում | 27100 | 31850 | 31850 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. հոկտեմբերի համեմատ աճել են 0.1%-ով:

2013թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 458 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 117, մարզերում միասին վերցրած՝ 341: 2013թ. նոյեմբերին, 2013թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 7.8%-ով, ընդ որում Երևանում ՝ 19.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 4.3%-ով: 2012թ. նոյեմբերի համեմատ, անհատական

բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 2.8%-ով, ընդ որում Երևանում ՝ 0.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած ՝ 3.4%-ով:

2013թ. նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| **Վարչական շրջաններ** | **Միջին գները/դրամ/** | | |
|---|---|---|---|
| | **նոյեմբեր 2012թ** | **նոյեմբեր 2013թ.** | **հոկտեմբեր 2013թ.** |
| **Կենտրոն** | 470000 | 476100 | 476100 |
| **Արաբկիր** | 372200 | 383000 | 383000 |
| **Քանաքեռ Զեյթուն** | 279800 | 295000 | 295000 |
| **Նորք Մարաշ** | 308300 | 319200 | 319200 |
| **Ավան** | 253200 | 270500 | 270500 |
| **Էրեբունի** | 237100 | 239500 | 239500 |
| **Շենգավիթ** | 242500 | 255000 | 255000 |
| **Դավթաշեն** | 269200 | 276000 | 276000 |
| **Աջափնյակ** | 242000 | 250050 | 250050 |
| **Մալաթիա Սեբաստիա** | 230000 | 238000 | 238000 |
| **Նուբարաշեն** | 144800 | 150500 | 150500 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. նոյեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. հոկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

2013թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| **Մարզեր** | **Քաղաքներ** | **Միջին գները /դրամ/** | | |
|---|---|---|---|---|
| | | **նոյեմբեր 2012թ** | **նոյեմբեր 2013թ.** | **հոկտեմբեր 2013թ.** |
| **Արագածոտն** | **Աշտարակ** | 134800 | 136200 | 136200 |
| | **Ապարան** | 56950 | 60050 | 60050 |
| | **Թալին** | 68650 | 69250 | 69250 |
| **Արարատ** | **Արտաշատ** | 98700 | 100000 | 100000 |
| | **Մասիս** | 113800 | 115100 | 115100 |
| | **Վեդի** | 100600 | 102300 | 102300 |
| | **Արարատ** | 87300 | 88000 | 88000 |
| **Արմավիր** | **Վաղարշապատ** | 152300 | 153100 | 153100 |
| | **Արմավիր** | 106500 | 107000 | 107000 |
| **Գեղարքունիք** | **Սևան** | 94200 | 94800 | 94800 |
| | **Գավառ** | 54600 | 57100 | 57100 |
| | **Մարտունի** | 94400 | 96100 | 96100 |
| | **Վարդենիս** | 37000 | 41000 | 41000 |
| | **Ճամբարակ** | 28050 | 31100 | 31100 |
| **Լոռի** | **Վանաձոր** | 98200 | 100000 | 100000 |
| | **Ստեփանավան** | 88000 | 90000 | 90000 |
| | **Սպիտակ** | 113600 | 114000 | 114000 |
| | **Ալավերդի** | 48100 | 50200 | 50200 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Տաշիր** | 51100 | 51900 | 51900 |
| | **Թումանյան** | 12000 | 12000 | 12000 |
| | **Շամլուղ** | 13200 | 14000 | 14000 |
| | **Ախթալա** | 29600 | 30000 | 30000 |
| **Կոտայք** | **Աբովյան** | 154700 | 157000 | 157000 |
| | **Նոր Հաճն** | 129800 | 129800 | 129800 |
| | **Բյուրեղավան** | 120000 | 120500 | 120500 |
| | **Եղվարդ** | 116100 | 116100 | 116100 |
| | **Հրազդան** | 80800 | 82600 | 82600 |
| | **Ծաղկաձոր** | 305000 | 305000 | 305000 |
| | **Չարենցավան** | 82500 | 83000 | 83000 |
| **Շիրակ** | **Գյումրի** | 117600 | 118500 | 118500 |
| | **Արթիկ** | 62700 | 63100 | 63100 |
| | **Մարալիկ** | 50600 | 52000 | 52000 |
| **Սյունիք** | **Գորիս** | 127700 | 130000 | 130000 |
| | **Կապան** | 98300 | 100000 | 100000 |
| | **Սիսիան** | 91300 | 96500 | 96500 |
| | **Մեղրի** | 80300 | 84500 | 84500 |
| | **Ագարակ** | 46500 | 46900 | 46900 |
| | **Դաստակերտ** | 11610 | 11610 | 11610 |
| **Վայոց Ձոր** | **Վայք** | 86700 | 90050 | 90050 |
| | **Եղեգնաձոր** | 115400 | 116600 | 116600 |
| | **Ջերմուկ** | 124600 | 131300 | 131300 |
| **Տավուշ** | **Դիլիջան** | 109900 | 113000 | 113000 |
| | **Իջևան** | 122000 | 123200 | 123200 |
| | **Բերդ** | 59000 | 60100 | 60100 |
| | **Նոյեմբերյան** | 46100 | 48300 | 48300 |
| | **Այրում** | 34600 | 36250 | 36250 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. հոկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2013թ. նոյեմբերին հանրապետությունում օտարվել են 1486 միավոր /635.66 հա/ հողեր, որից Երևանում՝ 159 միավոր /13.36 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 763 միավոր /573.05 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /2.83 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 455 միավոր /39.63 հա/, որից Երևանում՝ 74 միավոր /2.38 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 182 միավոր /11.28 հա/, որից Երևանում՝ 67 միավոր /7.92 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 12 միավոր /0.95 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /0.22 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 14 միավոր /9.61 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 60 միավոր /1.14 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. նոյեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1221 միավորի /508.20 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 134 միավոր /11.07 հա/, նվիրատվության գործարքներ՝ 256 միավորի /114.60 հա/, որից Երևանում՝ 23 միավոր /2.29 հա/ և փոխանակության գործարքներ՝ 9 միավորի /12.86 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.005 հա/:

Հանրապետությունում 2013թ. նոյեմբերին, 2012թ. նոյեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.5%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.9%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 17.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 40.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 106.10 հա, որից 101.20 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 31.0%-ը կամ 379 գործարքներ /120.89 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 75 միավոր /2.32 հա/, իսկ 68.6%-ը կամ 837 միավորը /387.15 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 59 միավոր /8.75 հա/: 2013թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 10 գործարք /0.35 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2013թ. նոյեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | | | | | | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 0 | 0.00 | 2 | 0.03 | 31 | 0.18 | 42 | 2.10 | 8 | 1.64 | 4 | 0.17 | 32 | 1.71 | 15 | 5.23 |
| Արագածոտն | 12 | 8.84 | 0 | 0.00 | 2 | 0.10 | 9 | 0.65 | 66 | 92.35 | 0 | 0.00 | 33 | 3.62 | 1 | 0.40 |
| Արարատ | 46 | 30.11 | 0 | 0.00 | 14 | 0.74 | 19 | 0.09 | 92 | 29.93 | 0 | 0.00 | 43 | 4.01 | 5 | 0.16 |
| Արմավիր | 3 | 0.33 | 0 | 0.00 | 3 | 0.04 | 3 | 0.05 | 128 | 85.35 | 0 | 0.00 | 39 | 4.09 | 2 | 0.05 |
| Գեղարքունիք | 1 | 1.86 | 0 | 0.00 | 3 | 0.14 | 8 | 0.07 | 79 | 44.22 | 2 | 0.25 | 15 | 2.08 | 2 | 0.10 |
| Լոռի | 6 | 3.11 | 0 | 0.00 | 10 | 0.09 | 7 | 0.14 | 30 | 12.99 | 0 | 0.00 | 11 | 1.51 | 0 | 0.00 |
| Կոտայք | 10 | 50.21 | 0 | 0.00 | 27 | 2.45 | 22 | 0.24 | 65 | 25.88 | 0 | 0.00 | 58 | 5.19 | 8 | 0.15 |
| Շիրակ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 5 | 0.17 | 5 | 0.57 | 17 | 21.75 | 0 | 0.00 | 13 | 1.26 | 2 | 0.06 |
| Սյունիք | 2 | 1.33 | 0 | 0.00 | 1 | 0.005 | 2 | 0.02 | 15 | 22.94 | 0 | 0.00 | 6 | 0.57 | 1 | 0.01 |
| Վայոց Ձոր | 4 | 14.28 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 13 | 8.79 | 0 | 0.00 | 2 | 0.22 | 4 | 0.31 |
| Տավուշ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 9 | 0.30 | 2 | 0.01 | 14 | 8.15 | 1 | 0.15 | 9 | 1.76 | 1 | 0.01 |
| Ընդամենը | 84 | 110.07 | 2 | 0.03 | 105 | 4.22 | 119 | 3.94 | 527 | 353.99 | 7 | 0.57 | 261 | 26.02 | 41 | 6.48 |

Ստորև ներկայացվում է 2013թ. նոյեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Աճուրդ վաճառք | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունաբ օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանակության հողերի | | Գյուղ. նշանակության հողերի | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | | | | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 53 | 1.30 | 2 | 0.03 | 31 | 0.18 | 20 | 1.09 | 22 | 1.01 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 22 | 1.01 |
| Արագածոտն | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 22 | 9.28 | 11 | 8.53 | 0 | 0.00 | 2 | 0.10 | 9 | 0.65 |
| Արարատ | 3 | 0.01 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.01 | 73 | 25.95 | 43 | 25.12 | 0 | 0.00 | 14 | 0.74 | 16 | 0.09 |
| Արմավիր | 1 | 0.02 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.02 | 7 | 0.23 | 2 | 0.16 | 0 | 0.00 | 3 | 0.04 | 2 | 0.03 |
| Գեղարքունիք | 2 | 0.11 | 0 | 0.00 | 2 | 0.11 | 0 | 0.00 | 10 | 1.96 | 1 | 1.86 | 0 | 0.00 | 1 | 0.03 | 8 | 0.07 |
| Լոռի | 2 | 0.01 | 0 | 0.00 | 2 | 0.01 | 0 | 0.00 | 20 | 3.08 | 5 | 2.85 | 0 | 0.00 | 8 | 0.09 | 7 | 0.14 |
| Կոտայք | 2 | 0.12 | 0 | 0.00 | 2 | 0.12 | 0 | 0.00 | 57 | 52.78 | 10 | 50.21 | 0 | 0.00 | 25 | 2.33 | 22 | 0.24 |
| Շիրակ | 1 | 0.01 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.01 | 9 | 0.73 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 5 | 0.17 | 4 | 0.56 |
| Սյունիք | 3 | 0.025 | 0 | 0.00 | 1 | 0.005 | 2 | 0.02 | 2 | 1.33 | 2 | 1.33 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 |
| Վայոց Ձոր | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 14.07 | 3 | 14.07 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 |
| Տավուշ | 5 | 0.072 | 0 | 0.00 | 4 | 0.07 | 1 | 0.002 | 6 | 0.234 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 5 | 0.23 | 1 | 0.004 |
| Ընդամենը | **72** | **1.68** | **2** | **0.03** | **42** | **0.50** | **28** | **1.15** | **231** | **110.65** | **77** | **104.13** | **0** | **0.00** | **63** | **3.73** | **91** | **2.79** |

2013թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 7 գործարք /5.94 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. նոյեմբերին, 2012թ. նոյեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 5.5%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 4.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 6.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 57.1%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ նվազել է 37.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ աճել է 1.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ նվազել է 7-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. նոյեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| **Արագածոտնի մարզ** | | | | | | | | | | |
| Աշտարակ | 5 | 3.35 | 183.0 | 972.8 | 520.4 | 36 | 51.23 | 365.0 | 12000.0 | 3567.0 |
| Ապարան | | | | | | 8 | 7.00 | 86.5 | 2727.3 | 720.0 |
| Թալին | 6 | 5.18 | 37.7 | 175.0 | 110.5 | 17 | 21.99 | 93.6 | 5494.5 | 695.3 |
| Ծաղկահովիտ | | | | | | 5 | 12.14 | 79.5 | 1000.0 | 292.5 |
| **Արարատի մարզ** | | | | | | | | | | |
| Արտաշատ | 9 | 1.95 | 147.7 | 3100.3 | 1738.5 | 49 | 12.67 | 335.1 | 10833.3 | 2684.1 |
| Մասիս | 7 | 15.95 | 68.8 | 1041.3 | 486.5 | 17 | 3.50 | 200.0 | 11904.8 | 3037.0 |
| Վեդի | 27 | 7.22 | 76.1 | 200.0 | 87.6 | 26 | 13.76 | 207.0 | 10795.1 | 1847.8 |
| **Արմավիրի մարզ** | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 64 | 34.15 | 294.3 | 9090.0 | 1260.0 |
| Բաղրամյան | | | | | | 28 | 33.68 | 90.6 | 2561.1 | 775.3 |
| Վաղարշապատ | 2 | 0.16 | 300.0 | 1690.1 | 995.0 | 28 | 10.97 | 444.4 | 11764.7 | 2240.3 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 45 | 6.45 | 199.8 | 1875.0 | 430.2 |
| Ճամբարակ | | | | | | | | 60.5 | 953.3 | 355.2 |
| Մարտունի | | | | | | 12 | 2.04 | 51.1 | 2850.0 | 742.5 |
| Սևան | | | | | | 11 | 8.11 | 52.2 | 2134.8 | 325.5 |
| Վարդենիս | 1 | 1.86 | 44.0 | 44.0 | 44.0 | 9 | 21.63 | 41.2 | 2575.1 | 418.5 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 1 | 0.26 | 3762.0 | 3762.0 | 3762.0 | 5 | 3.29 | 170.4 | 6424.2 | 567.5 |
| Գուգարք | | | | | | 13 | 1.65 | 234.6 | 6065.9 | 785.3 |
| Սպիտակ | | | | | | | | 250.0 | 5555.5 | 730.8 |
| Ստեփանավան | 4 | 2.59 | 184.7 | 375.0 | 285.2 | 1 | 4.26 | 90.6 | 1686.6 | 338.0 |
| Տաշիր | | | | | | 11 | 3.79 | 45.3 | 1384.4 | 165.5 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 1 | 1.99 | 229.1 | 229.1 | 229.1 | 23 | 8.88 | 279.3 | 11942.7 | 4115.5 |
| Եղվարդ | 6 | 46.24 | 76.5 | 1754.5 | 1399.7 | 32 | 12.18 | 174.4 | 11971.8 | 2430.0 |
| Հրազդան | 3 | 1.98 | 44.1 | 923.9 | 342.8 | 10 | 4.83 | 130.5 | 10256.4 | 1487.5 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 4 | 4.11 | 252.0 | 1693.1 | 630.6 |
| Ամասիա | | | | | | 1 | 5.75 | 40.9 | 261.0 | 126.0 |
| Անի | | | | | | 9 | 9.59 | 110.6 | 546.9 | 400.0 |
| Աշոցք | | | | | | | | 58.5 | 215.8 | 130.0 |
| Արթիկ | | | | | | 3 | 2.30 | 79.4 | 1428.6 | 432.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | 2 | 1.33 | 500.0 | 500.0 | 500.0 | | | 92.6 | 1023.2 | 738.0 |
| Կապան | | | | | | 1 | 0.04 | 120.0 | 841.6 | 370.0 |
| Մեղրի | | | | | | 1 | 0.14 | 193.0 | 3000.0 | 735.3 |
| Սիսիան | | | | | | 13 | 22.76 | 46.3 | 1977.4 | 555.0 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 3 | 14.07 | 68.8 | 328.6 | 155.4 | 8 | 2.54 | 125.0 | 10000.0 | 1935.0 |
| Վայք | | | | | | 5 | 6.25 | 58.8 | 1430.7 | 638.5 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 4 | 1.68 | 213.3 | 3783.8 | 685.5 |
| Իջևան | | | | | | 3 | 1.59 | 267.5 | 9454.5 | 1245.2 |
| Նոյեմբերյան | | | | | | 7 | 4.88 | 46.7 | 7368.4 | 905.3 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. նոյեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 1 | 29.7 | 4040.4 | 4040.4 | 4040.4 | 29 | 26523.7 | 130.7 | 22200.0 | 2581.1 |
| Ապարան | | | | | | 1 | 1570.0 | 124.1 | 609.6 | 390.0 |
| Թալին | 1 | 945.0 | 158.8 | 158.8 | 158.8 | 2 | 6948.0 | 63.2 | 1454.8 | 152.5 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 60.0 | 214.3 | 92.0 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 6 | 5606.8 | 366.2 | 5308.3 | 1423.8 | 14 | 16160.0 | 173.9 | 7140.3 | 898.0 |
| Մասիս | 7 | 1541.8 | 841.3 | 3565.0 | 2217.2 | 15 | 7496.0 | 187.5 | 25000.0 | 1206.6 |
| Վեդի | 1 | 206.0 | 703.9 | 703.9 | 703.9 | 14 | 16460.0 | 126.1 | 5000.0 | 661.0 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 1 | 63.9 | 4116.0 | 4116.0 | 4116.0 | 19 | 19624.0 | 131.6 | 9090.9 | 1214.0 |
| Բաղրամյան | | | | | | | | 100.0 | 833.3 | 240.0 |
| Վաղարշապատ | 2 | 379.5 | 2048.8 | 3151.3 | 2600.0 | 20 | 21324.0 | 197.4 | 26528.4 | 1530.0 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 2 | 1829.2 | 186.6 | 1084.3 | 683.3 |
| Ճամբարակ | | | | | | | | 71.3 | 2286.2 | 148.1 |
| Մարտունի | | | | | | 11 | 16197.7 | 119.3 | 5000.0 | 281.4 |
| Սևան | 1 | 300.0 | 714.2 | 714.2 | 714.2 | 1 | 681.0 | 240.0 | 3110.4 | 320.0 |
| Վարդենիս | | | | | | 1 | 2070.0 | 72.5 | 987.2 | 150.0 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 4 | 141.4 | 1100.0 | 1650.0 | 1512.5 | 3 | 5990.0 | 114.3 | 1388.9 | 217.0 |
| Գուգարք | 3 | 680.0 | 2297.8 | 2940.0 | 2511.9 | 2 | 1770.3 | 77.9 | 14083.3 | 1260.0 |
| Սպիտակ | | | | | | 4 | 2684.0 | 104.9 | 1348.3 | 206.5 |
| Ստեփանավան | | | | | | 2 | 4616.0 | 88.2 | 1666.7 | 175.5 |
| Տաշիր | 1 | 30.0 | 622.0 | 622.0 | 622.0 | | | 45.3 | 400.0 | 90.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 24 | 22034.8 | 310.0 | 4975.8 | 1456.5 | 17 | 12944.0 | 264.5 | 35353.5 | 1993.1 |
| Եղվարդ | 1 | 1250.0 | 230.0 | 230.0 | 230.0 | 37 | 35307.1 | 173.6 | 27000.0 | 2860.0 |
| Հրազդան | | | | | | 4 | 3690.0 | 117.7 | 34848.5 | 1317.3 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 3 | 904.1 | 1150.0 | 1960.5 | 1485.0 | 6 | 2624.4 | 113.6 | 18750.0 | 334.5 |
| Ամասիա | | | | | | 1 | 3580.0 | 45.3 | 274.7 | 71.0 |
| Անի | 2 | 800.0 | 346.8 | 346.8 | 346.8 | 3 | 2800.0 | 67.9 | 180.6 | 178.5 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 64.0 |
| Արթիկ | | | | | | 3 | 3580.0 | 111.8 | 5000.0 | 217.7 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 1 | 1620.0 | 112.2 | 1700.0 | 368.0 |
| Կապան | | | | | | 2 | 1120.0 | 67.9 | 2638.9 | 307.5 |
| Մեղրի | | | | | | 1 | 1170.0 | 68.5 | 632.9 | 217.0 |
| Սիսիան | | | | | | 2 | 1790.0 | 123.5 | 875.0 | 215.3 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 2 | 2200.0 | 96.7 | 7659.6 | 505.0 |
| Վայք | | | | | | | | 120.7 | 1448.3 | 225.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 2 | 4921.0 | 75.8 | 810.0 | 121.5 |
| Իջևան | 5 | 2318.0 | 1552.6 | 3000.0 | 2545.2 | 6 | 10256.2 | 74.1 | 14423.1 | 510.0 |
| Նոյեմբերյան | | | | | | 1 | 2390.0 | 125.0 | 1948.1 | 230.0 |

2013թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 716 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.3%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 68.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2013թ. նոյեմբերին, 2013թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 8.3%-ով, իսկ 2012թ. նոյեմբերի համեմատ նվազել ՝ 19.9%-ով:

2013թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 44 բնակարանների, 79 անհատական բնակելի տների, 305 հասարակական, 88 արտադրական նշանակության օբյեկտների, 183 հողերի և 16 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. նոյեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 9 վարձակալության գործարքների, այդ թվում 6 միավոր /0.13 հա/ կառուցապատման իրավունքով,որոնց քանակը 2013թ. հոկտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2012թ. նոյեմբերի համեմատ աճել ՝ 3.0 անգամ: 2013թ. նոյեմբերին հանրապետությունում վարձակալված 191.77 հա հողերից 0.16 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 191.11 հա հողերից 186.06 հա կազմում են

գյուղատնտեսական նշանակության, 0.48 հա արդյունաբերական օբյեկտների, 0.30 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 72.29 հա, որից 72.28 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2186 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.2%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 3.9%-ով, իսկ 2012թ. նոյեմբերի համեմատ աճել ՝ 10.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.1%/, առանձնատների /26.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.2%/ և հողերի /6.6%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1136 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 10.9%-ով, իսկ 2012թ. նոյեմբերի համեմատ աճել ՝ 25.5%-ով:

2013թ. նոյեմբերին հանրապետությունում գրավադրվել են 214.31 հա հողեր, որից 14.93 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 77.0%-ը կամ 165.03 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.57 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 101.95 հա, որից 101.09 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. հոկտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 177 գործարքներ: 2013թ. նոյեմբերին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը 2013թ. հոկտեմբերի համեմատ աճել է 6.0%-ով, իսկ 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ 14.2%-ով:

Երևանում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 114 գործարքներ,որը 2013թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 6.6%-ով,իսկ 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել ՝ 25.3%-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը 2013թ. հոկտեմբերի համեմատ աճել է 40.0%-ով, իսկ 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել՝ 1.6%-ով:

2013թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1757 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2013թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 11.6%-ով, իսկ 2012թ. նոյեմբերի համեմատ ՝ 18.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /27.3%/:

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**